

ՎԱՆԱԹ ԾՈՎԱԿԻ ԿՂԶԻՆԵՐԸ

ԱՂԹԱՄԱՐ

(Շար. տես յէջ 516)



ՄԱՆԴԱԿԱԳԻՐՆ յետ յիշելոյ Տ. Դաւթի կաթողիկոսանայն կը յաւելու շտրք մը կաթողիկոսաց, հանդերձ համառօտ ծանօթութեամբ նոցաբարած գլխաւոր արդեանց վրայ: Այս կաթողիկոսաց շտրքն ոչ համապատասխանէ մեր հրատարակածին, զորս պատճառն կամ այն է՝ որ աստ յիշուածներն Արծրունեաց ցեղի կը վերաբերին, այդ պատճառաւ արծառնի համարած է առանձին գրել, և կամ մեզ ծանօթ Աղթամարայ կաթողիկոսաց շտրքի մէջ անցուած են ոչ միայն կաթողիկոսաց այլ և վանահայր եպիսկոպոսաց անուանք: Մենք գաղափար մ'առնելու համար ըստ կարի համառօտաւ ակնարկ մը տանք նաև այդ կաթողիկոսաց վրայ: Ենա Տ. Դաւթի գրուած է Տ. Գրիգոր, և ապա չգիտեմ ինչո՞ւ դուրս ձգելով Տ. Յովհաննու Աղձնեցւոյ և Տ. Խաչատուր Տիգրանաւ կերտցւոյ անուանքը, կը զնէ Պարոն Սեֆեդի որդին, աղայ Տ. Ստեփանոսը: Սոյն այս Տ. Ստեփանոսի հօր Պարոն Սեֆեդի վրայ, անշուշտ պիտի փափաքի ընթերցողը ծանօթութիւն առնուլ, մանաւանդ որ՝ ուրիշ առթիւ այլ գրուածքիս սկիզբները հանգիպելով այդ անուան, խոստմունք տուինք ի վերջոյ ծանօթացնելու: Պարոն Սեֆեդիներ, ինչպէս նաև Թումայի Արծրունւոյ շարունակողի մի քանի իջից մէջ և ի կոնդակի յիշուած Պարոն Կուրծիբէկն և Պարոն Նուրագին, Գաղկայ արծրունւոյ ցեղէն սերած իշխաններ էին, և կամ լաւ ևս Արղլմանհէ իշխանի որդիք կամ Թողունք: Արղլմանհէն վերջ, մեր աշխարհի թշուառութիւնք երթալով կ'առաւելուն, թեպէս

և տեղ տեղ նախարարական և իշխանական գնդեր, անտոկի ամրոցաց մէջ և անմառաշի լեռներ քաշուած, չէին դադարիր երբեմնական յարձակմունքներ գործել ընդդէմ թշնամեաց: Այգորինակ քաղերէ մին էր և իշխանն Ալուզ, որոյ մահէն վերջ կը յաջորդէ որդին, արին Խեղենիկ, որոյ ծերացած ժամանակ յերևան կ'երևէ մեր վերը յիշած Պարոն Սեֆեդիներ: Ասոր վրայ հետեւալ գովասանական կերպով կը խօսի շարունակողն Թումայի. «Այր մի երեւալ և աստուածային փառօք զարդարեալ, ազատ և յազատ ծնողաց, սնեալ սրբութեամբ և արդարութեամբ և հասեալ յիմաստութիւն աստուածեղէն ուրբ կտակարանաց, ուղղափառ հաւատով և քրիստոսազաւան խոստովանութեամբ...»: Սա կարծես աստուածային կոչմամբ մը և կամ բնական ազգեցութեամբ կը դիմէ զէպի իւր նախնեաց խանձարուրքը, զէպի յԱղթամար: Նոյն ժամանակները Աղթամարը սեփհակախուժիւն զարձած էր Խեղենիկ իշխանին, որ զՍեֆեդին ուրախութեամբ կ'ընդունի և իբրև իւր որդին ռաստիկ սիրելով, իւր զուտորը նորա կնոջկեան կուտայ, և իբրև վարձք Սեֆեդին կամ՝ օժիտ իւր զստեր, կը պարգեւէ Աղթամարայ կնուր: Պարոն Սեֆեդին իւր հանճարովն և պործունէութեամբ խիստ լաւ կեանք կ'անցընէ յԱղթամար և կը հարստանայ. այնպէս որ Խեղենիկ իշխանը չքաւորութեան մէջ ինկնալով երբ կը հարկադրի Աղթամարայ միացած կէսն վաճառել և ապրուստ ճարել, շատ ոսկիներ տալով զայն կը զնէ Պ. Սեֆեդին: Բովանդակ Աղթամարը Պ. Սեֆեդին իշխանութեան տակ մտնելէն վերջ, Աստուած իբրև կու տայ ընտիր և բարի զաւակ մը, որ մինչև անգամ Աղթամարայ Հայրապետ տական զահր կը բարձրանայ, որ ինչպէս վերը տեսանք կոչուած է աղայ Տէր Ստեփանոս: Սեֆեդիներ բաց յայլոց շինութեանց և նորոգութեանց, իւր կաթողիկոս որդւոյն համար այլ յատուկ դարպաս մը չինել տուաւ յԱղթամար: Տ. Ստեփանոս Հայրապետն այլ ոչ յսկաւ շինութիւններ ըրաւ, յորոց մեզ ի վաղուց ծանօթ են նորա սուրբ Խաչի գմբեթը սալին և նոյն սուրբի հարաւա-

կողմը նորոգութիւն ընելն, ասոնցմէ զատ ինչպէս կ'երևի թափել տուած է նաև զանգակ մը և շինել տուած երկու փոքրիկ մատակներ, սուրբ Թովմանն և սուրբ Նշան տնուամբ, ի յիշատակ իւր հոգւոյն Պարոն Սիմֆեոնին և եղբարցը և համայն ազգականաց: Հազիւ քառասուն տարի կեանք կ'ունենայ Տ. Ստեփանոս հայրապետը, և ի մեծ սուգ իւր անմիկթար հօրը, կը փոխի յանցաւորէն յանանցն և կը թաղուի ի կղզւոյն:

Գլծածն և ողորմած Աստուած ուզելով սփռփել Սիմֆեոնի սրտի ցաւն ու կսկիծ, կը պարգեւէ իրեն ուրիշ երկու զաւակներ ալ, յորոց մին կը կոչուի Ամիր Գուրգէն և միւսն Ջաքարիա: Քանի մը տարեկէն Պարոն Սիմֆեոնի ալ ծերանալով, բարի մահուամբ կը փոխի յառաջաց, առանց տեսնելու իւր փոքր որդւոյն Ջաքարիայի կաթողիկոսանալն:

Մանուկն Ջաքարիա, իրեն զօրավիգ և օգնական ունելով իւր հարազատ եղբայրը Ամիր Գուրգէնը, և Պարոն կուրծրէկ և Պարոն Նուրաղին հօրեղբարցը, կը սկսի ուսանիլ ին և նոր կտակարաններն և սրբազան պաշտամանց վերաբերեալ ամենայն գիտութիւնք: Սա երբ չափահաս եղաւ և երբ անշուշտ Տէր Եղիշէ¹ Աղբակցի կաթողիկոսն այլ վախճանեցաւ, վերոյիշեալ պարոններն միանալով և ժողով գումարելով յԱթմամար եպիսկոպոսօք, վարդապետօք և կրօնաւորօք կ'ընտրեն և կը ձեռնադրեն զՋաքարիա յաթոռ հայրապետութեան, և մեծ խնդութիւն և հանդէս կը կատարեն յԱթմամար:

Տէր Ջաքարիա կաթողիկոսը կղզւոյ հայրապետաց շարքի մէջ փայլուն և գովելի դիրք մը զբաւած է և կոչուած « ամենայն առաքինութեամբ զարդարեալ նման Տէր Դաւթին »: Իւր բազմաթիւ շինութիւններով ոչ միայն Աթմամարը, այլ և նորա շրջակայքը զարդարեց հրաշալի կերպով: Սոյն հայրապետիս Աթմամարէն գուրս կառուցած շինուածոց վրայ տեղեկութիւն աննկուսալ և անհերք ասպարէս արժանի է:

Նուաժոց վրայ տեղեկութիւն աննկուսալ և անհերք ասպարէս, երբ յարմար առիթն գայ, իսկ այժմ մեր ուշադրութիւնը զարժննք կղզւոյ մէջ բարձրացուցած շինուածոց վրայ: Սուրբ Խաչի տաճարի կոնակը շինել տուաւ մեծ և գեղեցիկ ժամատուն մը ձմեռուան համար, և արեւմտեան կողմը փառաւոր կամարակապ ժամրակ մը ամառուան համար: Այս երկու շինուածոց մեծահատոր սրբատաշ քարերն, մեծ աշխատութեամբ լատերով բերուեցան խլաթին: Ինչպէս վերը տեսանք Պարոն Սիմֆեոնիւր իւր անդրանիկ որդւոյ Տ. Ստեփանոս հայրապետի համար շինած էր յԱթմամար զարպաս մը, սա իւր բարեյշխատակ հօր այդ շինուածքի վրայ շինել տուաւ շատ մը վայելուչ և գեղեցիկ վերնատներ, ամառուան բնակութեան համար:

Տէր Ջաքարիա հայրապետն ոչ լոկ փայլեցաւ և հոյակաւոր եղաւ նիւթական շէնքեր բարձրացընելով ու զարդարելով Աթմամարայ արտաքինը, այլ և ջանաց և քաջալեր եղաւ իւր ժամանակի միանձնաց, յառաջագէմ լինելու ընդ հօգեկանին նաև զբաւած ասպարիզի մէջ: Գրեյ տուաւ Տօնական բաւած մատենաւր, յորում բովանդակուած էին ձառներ այլ և այլ տէրոնական տօնից վրայ և վարքեր՝ սրբոց հայրապետաց, վարդապետաց, զօրավարաց և կուսանաց. բաւ կոնգակին գրեյ տուաւ նաև զՍարգիս գիւրք: Նոյն ժամանակները ԶԾԲ (= 1303) թուին, Սիրնեաց Տ. Ստեփանոս արքեպիսկոպոսն կը խնդրէ Տ. Ջաքարիա հայրապետէն թոյլմայի Արծրունւոյ պատմութեան օրինակ մը. հայրապետն այլ սիրով յանձն կ'անուս նորա խնդրքը, և իւր կրօնաւորներէն Դանիէլ աւանդով մէկուն ընդօրինակել կուտայ հնագոյն օրինակէ մը: Այս զրբի օրինակութեան ամենայն ծախք ինչ որ հարկաւոր է, առատապէս կու տայ Տ. Ջաքարիան, մանաւանդ երբ կը տեսնէ որ, իւր յիշատակարանի խօսքերով, ամենիմաստ և բարեմիտ, հեղ և խոնարհ հարազատ եղբայրը Ամիր Գուրգէնն ալ այդ գործի փափաքողներէն մին կը լինի¹:

1. Մեր հրատարակած Աթմամարայ կաթողիկոսաց շարքէ մէջ, յետ Տ. Ստեփանոսի զբաւած է Տ. Եղիշէ Աղբակցին, և ապա Տ. Ջաքարիան:

1. Կ. Պուլիս 1852ին ապուած թովմայի Արծրունի:

Սա քաջ պաշտպան հանդիսացաւ վաճառքիս
և իրաւանց բրիտանիէից և հզօր ախոյեան
ընդդէմ՝ այլազգեացն Ալի փաշային և այլոց:
Սակայն կենաց վերջի տարիները թէ ըն-
տանեկան և թէ արտաքին մեծ ցաւեր ունե-
ցաւ և թմնեալ այլ սիրով և համբերութեամբ
տարաւ: Հուսկ ուրեմն իւր կենաց երեկոյին
հասած առնել, երբ ախորեալ գլուխը բարձ-
րացուց և տեսաւ որ Աղթամարը վտանգի
մէջ էր և կամաց կամաց սեփակեալութիւն
պիտի դառնար այլազգեաց, ինքն սրբու-
թեամբ աշերը փակեց յԱղթամար, և հոգին
սլացաւ յերկինս առ արդարն դատաւոր, ա-
ւելի զօրեղապէս խնդրեալ ի Տեսնոնէ, որ
իւր նախնեաց հրաշակերտ Աղթամարը այ-
լազգեաց ձեռքը չմտնուի: Կոնդակի մէջ
չէ գրուած Տ. Ջաքարիայի մահուան թուա-
կանը, բայց Թոմայի շարունակողն կը գնէ
հայկական 22է (— 1326) թուականը¹:

Անմիջապէս Տ. Ջաքարիայէն վերջ, կոն-
դակագիրն առանց յիշելու կաթողիկոսաց
շարքի մէջ գրուած հետեւեալ անուանք, Տ.
Յակոբ, Տ. Բարսեղ, Տ. Սարգիս, Տ. Գրի-
գոր, Տ. Թադևոս, Տ. Սիման, կը բազմեցնեն
հայրապետական գահը զՏԻ Դաւիթ: Ար-
ծրունեաց պատմիչ շարունակողն այլ ընդար-
ձակօրէն կը պատմէ թէ Տ. Ջաքարիայէն
վերջ ինչպէս ի գահն կը բարձրանայ Տ.
Դաւիթը: Տ. Ջաքարիա իւր կենաց վերջերը
չհասած կը մտածէ, թէ իր մահէն վերջ
հայրապետական գահը նստի իւր ազգական-

ներէն մին: Ուստի այս դիտմամբ իւր եղ-
բօրը Ամիր Գուրգէնի որդին Դաւիթը կրթե-
լով սրբազան պաշտամանց կարեւոր ամենայն
գիտութեամբք, օր մը մեծ հանդիսով շատ մը
եպիսկոպոսներով, քահանաներով, կրօնա-
ւորներով և բազմութեամբ ժողովրդաց, կը
ձեռնադրեն Դաւիթ ժառանգ և ժառանգա-
կեց Աղթամարայ արժողոյն:

Երբ կը վախճանի Տ. Ջաքարիա, աղե-
տից և թշուառութեանց ենթակայ մեր աշ-
խարհը տակն ու վրայ կը լինի, զի կ'ըսէ
շարունակողը «... ոչ գոյր մեր թագաւոր
կամ իշխան, կամ դատաւոր կամ այցելու,
կամ առաջնորդ կամ փրկող և կեցոցցանող
որ ազատեց զմեզ յայլասեռից և ի շար
թշնամեաց»: Ճիշդ այդ ժամանակը վախճա-
նած էր նաև նորընտիր Տ. Դաւիթ հայրա-
պետի հայրն Ամիր Գուրգէն և նորա անդրա-
նիկը Ամիր Սահմանգն, և մնացել էին միայն
Տ. Դաւիթի երկու եղբարքն Ամիր Կորսնդէկ
և Սեֆեդին¹: Ահա այսպիսի աղետալից և
վտանգաւոր ժամանակ հարկ կը լինի որ
հայրապետական գահը բարձրանայ Տ. Դա-
ւիթը, և շատ գանձ առաւով անօրինաց, ա-
զատէ վայրենեաց ճիրաններէն, ոչ միայն
նուիրական Աղթամարը, այլ և բոլոր շրջա-
կայ մենաստանաց մեծամասնութիւնն:

Թոմայի շարունակողը իւր գրութիւնը կը
հասցնէ մինչև սոյն Տ. Դաւիթ հայրապետն,
որոյ վրայ շատ գովեստով կը խօսի և աստղի
ու արեգական կը նմանցնէ: Տ. Դաւիթ
հայրապետը իւր երկու եղբարցը հետ մէկ
սիրտ մէկ հոգի եղած՝ կը լանայ յայլազ-
գեաց ձեռքէն ազատել Աղթամարայ սրբու-
թիւնները: Իւր վախճանը չգիտեմք թէ ինչ-
պէս եղաւ. կոնդակագիրն, յետ զինքը յի-
շելու՝ գուրս կը ձգէ դարձեալ կաթողիկոսաց
շարքէն եօթը անուանք, և կը գնէ Տ. Ներսէս
հայրապետը, որուն փոխառ մականունը կու
տան, և յետոյ նոյնպէս թողլով վեց անուանք
կը յիշէ զՏ. Ջաքարիա, որ նահատակուեցաւ

որունոյ պատմութեան առաջին և ընտիր օրի-
նակն եղած է սոյն այս օրինակութիւնն, զոր
բարեբար ազնուական մը, Մ. Խնդիր Ալա փա-
փազեան: Նուիրած է Միշակադի վերջանու-
թեան թանգարանին:

1. Առա տեսնելով Տ. Ջաքարիայի մահուան
թուականը, և անդրադարձութիւն մ'ընելով,
հարկ կը համարիմ յայտնել ընթերցողաց, թէ
հակառակ մեր նախընթաց յօդուածի վերջին
առիթու, պէտք է ըսեմ որ Աղթամարայ առա-
ջին ապստամբ Տ. Դաւիթ կաթողիկոսն, մեր
հասարակած կաթողիկոսաց շարքի մէջ յի-
շուած չէր որք Տ. Դաւիթը չէ, այլ լինելու է
Տ. Ջաքարիայէն առաջ, բարձր Տ. Դաւիթ մը:

1. Ամիր Գուրգէնը այսպէս անուանած է իւր
երկու արքեբքը մին իւր Պարոն Սեֆեդին հօրը՝
անուամբ, և միւսը Պարոն Արեւոյնի եղբօրը:

անօրէններէն Ոստանայ մէջ։ Սոյն այս Տ. Զաքարիայի նահատակութեան պատմութիւնն համառօտիւ ի մէջ բերենք աստ, քաղելով ի Յայրմաւորաց։ Անգղի լանկիթմորայ բարբարոսութեանց ժամանակ կը պատահէ Տ. Զաքարիայի Աղթամարայ հայրապետ լինելն, ժամանակ մը, յորում մեր սեփականաւ թեանց տէր էին դարձած բարբարոս սուրն և բռնութիւն։ Մեր քաղաքական զօրութիւնն բոլորովն ոչնչացած էր և հոգևորականն այլ ոչնչանալու ենթակայ։ Նոյն ժամանակները Ոստանայ այլազգի ամիրայն էգզին, Աղթամարայ բնակչաց դատաւոր կը կարգէ Ճաֆար անոնով պարսիկ մը, որ տեսնելով թէ կղզոյ հայրապետն իրմէ աւելի զօրաւոր իշխանութիւն ունի, և առ նա գրաւուած են բոլոր կղզեցոց սրտերն, նոքա կեանքը վերցնելու հնարք մը կը խորհի։ Օր մը դաւաճանութեամբ կը տանի առ հայրապետն մտխաղ մը և անոր տալով կ'ըսէ. «Առ սա մտխաղս և պահէ իբրեւ աւանդ, և երբ ինձ պէտք լինի՝ այն ատեն կու տաս»։ Կաթողիկոսն հասնելով այլազգի դատաւորին շար խորհուրդը, կը մերժէ նորա խնդրքը՝ ըսելով թէ իմ տունս պահեստի յարմար տեղ չկայ։ Ասոր վրայ սաստիկ կը բարկանայ անօրէն Ճաֆարը, հայհուդութիւններ կ'ընէ ատաքի։ Նազարդ հայրապետին և մինչև անգամ կը յանգզին պատակ կը զարնէ։ Կաթողիկոսն հեզաբար կ'ըսէ. «Քեզ վայել չէ և ոչ այլ օրէն, առանց վրաս յանցանք մը գտնելու ինձ հետ այդպէս վարուիլ»։ Եւ երբ այլազգին՝ դեռ աւելի կատաղած կը կրկնէ ապտակը, վրայ կը հասնին Աղթամարցիք և կ'ազատեն զհայրապետն։ Այս տեսնելով Ճաֆար բարկութենէն զգեստները կը պատառօտ և եւրենգներով ճանկովներով երեսը կը վիրաւորէ և արիւնով կը ներկէ, թանի մը մաշ ալ մորուքն կը փետտէ, և այս կերպարանքով շուտ մը Աղթամարէն ելնելով կը փութայ յՈստան, և անդ էգզին ամիրայի դիմաց կը շարխառէ զհայրապետն և կղզւոյ բնակիչներն, ըսելով թէ նոքա զիս այս վիճակիս հասուցին։ Նոյն ժամանակ Աղթամարէն Ոստան կ'անցնի նաև Տ. Զաքարիա և բաղնիքի մէջ կը գտնէ զամիրայն ընդ Ճաֆար

րայ, անդ ցոյց կու տայ ամիրային թէ՛ իւր և թէ՛ ժողովրդեան անմեղութիւնը։ Բայց անօրէն ամիրայն, փոխանակ մտիկ ընելու և աղատ թողու զերանելի հայրապետը, զինք պատժոյ արժանի կը դատէ և կ'ըսէ. «Քեզ ուրիշ կերպով ազատում չկայ, բայց միայն հաւատալ ուրանալով»։ Հայրապետը կը պտտասխանէ. «Ես թէ՛ անմեղ եմ, թէ՛ անպարտ. բայց եթէ յանցաւոր ալ լինէի, չէի կրնար ուրանալ գրիբստոս՝ որ զիս չուրացաւ»։ Այս խօսքերուն վրայ, կրակ դարձած ամիրայի և Ճաֆարոյ ծառաները, կը յարձակին հայրապետի վրայ և բաղնիքի մէջ սրով կը խոցեն նորա սնակուշտը. յետոյ դուրս հանելով, ազգի ազգի տանջանօք կը քաշընն զերանելին Զաքարիա Ոստանայ փողոցաց մէջ։ Այդ տանջանաց մէջ, նա միշտ ամառունչ կարդալով զԱստուած, կ'աւանդէ իւր սրբասնեալ հոգին, որոյ մարմինը այլազգիք քաղաքէն դուրս հանելով մինչ կ'ուզէին այրել, ամիրայն կ'արգելու և հրաման կու տայ քրիստոնէից որ զայն վերցընեն։ Ուստի Աղթամարցիք արտառուածք աչօք և սրտակսկիծ, իբրեւ սուրբ մարտիրոս սի մը մարմին, կը տանին յԱղթամար և կը թաղեն հանդիսիւ։ Երանելի հայրապետիս այսօրինակ մահն մեծ ցաւ կը պատճառէ, ոչ միայն Աղթամարայ և նորա շրջակայ քրիստոնէից, այլ և բովանդակ հայու թեան։ Տ. Զաքարիայի մարտիրոսութիւնն թէ և Հ. Միքայէլ վ. Չամչեան կը գնէ հայոց Պոլս (== 1396) թուին, յունիսի 26ին, առկայն թէ՛ տպագիր և թէ ձեռագիր Յայաւմատը կը գնեն հայկական Պոլս (== 1393) կամ տարբեր ձևով Ըձ և ԽԲ (== 1393) թուին։

Ասա արժան կը համարիմ ի մէջ բերել նաև ուրիշ մարտիրոսական գէպք մը, որ վերաբերութիւն ունեցած է Աղթամարայ հետ և ժամանակակից կը համարուի վերնոյն։ Մոկաց աշխարհի մէջ Թումաս անունով հայ մը ունէր Թումար անուամբ կնիկ մը, որ իւր գեղեցկութեան և պարկեշտութեան համար կը կոչուէր նաև Գոռար։ Այլազգի մը կը ցանկայ սպաննելով զԹումաս, յափշտակել զԹումար։ Այս բանս իմանալով Թումաս

ե թամար, և մտածելով որ բայց ի փախստեան և ուրիշ կերպով չեն կրնար ազատիլ այլազգայն ձեռքէն, կ'առնեն իրենց մանկունքը և կ'ապաստանին յԱղթամար, Զորս կամ հինգ տարի վերջ, օր մը գործի համար մինչդեռ Ոստանայ փողոցներու մէջ կը շրջին, ալյազգիք յարձակելով կը բռնեն զթամար և տանելով Էդգին ամբարյի դիմաց կ'ամբաստանեն թէ սա երեմի մեր կրօնքէն էր։ Ամբարյն թէ և կ'ուզէ ազատ թողլու զամբաստանեալն, բայց նորա կինը փաշա խաթունը առ ինքն կ'անշելով զթամար, կ'ստիպէ որ հաստաբը ուրանայ, և բանտ մը կը դնէ ուր տասը օր անսուսող կը կենայ։ Շատ տանջանքներ և յորդորներէ վերջ երբ հաստանուն կը ֆայ զթամար իւր քրիստոսական սուրբ կրօնից վրայ, ալյազգիք զինքը քարկռծելով կը մեղցընեն Հայկական Պեշ (== 1398) թուին, որոյ մարմինը քրիստոնէսայք պատուով կը թաղեն։

Արդ տեսնենք թէ կոնզակադերն յետ Տ. Զաքարիա մարտիրոս հայրապետին, զմի կը նստուցանէ ի գահն Աղթամարայ։ Դուրս կը ձգէ տասը անուանք և կ'ըսէ. «Յետ Տ. Զաքարիա կաթողիկոսին նստաւ նախ Տ. Ներսէս հօրեղբորորդի իւր, որ ի Շատախու երկիրն անկաւ ի գեան»։ Մանրամասն տեղեկութիւնք կը պակսին Տ. Ներսէս հայրապետի գետնակուր լինելու մասին, կոնզակադերն ալ պարզ վերոյիշեալ խօսքերը ի մէջ բերելէ վերջ, շարքէն ութ անուանք թողլով կը յիշէ աղքատասէր, ողորմած և ամենայն առաքնութիւնամբ լցեալ Տ. Դաւիթը։ Երեւի այս հայրապետս ալ երևելի է եղեր, ոչ միայն իւր հոգեխորովեալքն ալ և գիտուածամբ։ Գրել տուած է Յայմասուրը մը կոտնով մականուամբ թումամ վարդապետի մը, որ անշուշտ ճարտար լինելով ի գրագրութեան, կոչուած է քաջ քարտուղար։

Տ. Դաւիթ ժամանակ կը յիշուի Գանիէ տրքեպիսկոպոս մը յԱղթամար, որ կոնզակա ի խօսքերով քաջ գրագետ լինելով, և ... զբաղուած լուսաւորեալ պտղոյ մատամբ իւրով, մանաւանդ զամբոս մեր. զճառ, զմարգիտ Գիրք, զԵրչումն, զԹումամ Գիրք և։ Առանց յիշատակելու հայրապետի մահուան թուա-

կանը¹, վից տողով ողորմիւ մը կու տայ և կը մարթնէ որ Աստուած լուսաւոր տորահոգին և ընդ սրբոց հայրապետացն Յովհաննու անտարանչին և Ոսկիաբանին դասակից, փառակից և խորանակից ընէ։ Յետ ողորմիւր եղիցներով վերջացնելու, տասը անուն թողլով կը դնէ զՏ. Զաքարիա, Ըսելով. «Այլ և եղեալ ի բարի յարմատոյն Գազկայ եր Զաքարիա կաթողիկոսն, եղբորորդի Տ. Դաւիթն...»։ Կոնզակադերն այն այս հայրապետս գերազայն կը համարէ, քան մեզ ծանօթ Տ. Զաքարիայն, ոչ նահատակը։ Եղբորորդի Տ. Դաւիթ բնելով, չգիտեմ վերոյիշեալ Հեզահոգի Տ. Դաւիթը կը հասկնայ, թէ շարքին մէջ անմիջապէս Տ. Զաքարիայն տառջ դրուած 66 ուր Տ. Դաւիթը։ Այս հայրապետիս գործոց վրայ յետոս, հարկ է մի քիչ զբաղինք Աղթամարայ ի նշովից արձակուելու խնդրովը, որ հաւանականութեան հանդիպած է Աղթամարայ Հեզահոգի Տ. Դաւիթ կաթողիկոսի ժամանակ։

Շարայարեւի

Հ. Ս. ԼՓԻՆԵՐՈՍ

1. Աշննեաց Գեղէ դասակի մէջ գտնուած Գամաղիէի վանքի մէջ գրուած Տօնականի մը յիշատակարանը մեզ կը յայտնէ որ Պեշ (== 1397) թուին, յորում գրուած է նոյն մատենանը, Աղթամարայ կաթողիկոսն էր Տ. Դաւիթ, զի այսպէս զրէ և... ի Հայոց թուականն Պեշ (== 1397) ի վանքս Գամաղիէ կոչեցեալ է հայրապետութեան Կիլիկեաց Տ. Կարապետին և ի մեր հայրապետութեան Աղթամարայ Տ. Դաւիթն։ Այս յիշատակարանի պատճառին էնձ կարծել կու տայ թէ այդ Տօնականը եմէ գրուած չէ, մեր հրատարակած կաթողիկոսաց շարքի մէջ յիշուած ճշրութեւ կամ ճշրութեւ Տ. Դաւիթին երես ժամանակ, ապահովապէս գրուած ըլլալու է այս հեղահոգի Տ. Դաւիթ օրով։ Եթէ մեր ձեռքն լինէին զեմ յիշատակարանք այն ամենայն ձեռագրաց որ գրուած են յԱղթամար և կամ նորա շրջակայից վանքերում, այն ժամանակ միայն, ինչպէս ուրիշ անգամ այլ ըսիք, կ'առնենայինք Աղթամարայ կաթողիկոսաց ճշգրտոյն շարքը, և իւրաքանչիւր կաթողիկոսի ի գահն նստելու և վարձանելու թուականք։